ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ

«Հավատք և ժառանգություն» շարժման միջոցառումների մեջ առանձնացավ եզակի մի արարողություն: Զվարթնոցում 10-րդ դարից հետո առաջին անգամ կատարվեց մկրտություն՝ տաճարի կենտրոնում գտնվող մկրտության ավազանում: Իսկ մկրտվող 11 պատանիները Արմավիրի մարզի կրթօջախների 450 կամավորներից էին, որոնք մայիսի 1-2-ը մասնակցեցին Հայաստանի վանքերի և պատմական հուշարձանների շրջակայքի մաքրման աշխատանքներին: Նրանցից 200-ը աշխատեցին Էջմիածնում՝ մաքրելով և բարեկարգելով Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ վանքերի շրջակայքը, Ներսիսյան անտառը և նրա հարևանությամբ գտնվող գերեզմանատունը, ուր ամփոփված են 1915–18 թվականների սովին ու հիվանդությանը զոհ գնացած բազմաթիվ գաղթականներ:

Ոչ միայն Էջմիածնում աշխատող, այլ նաև շարժման մասնակից ավելի քան 12000 պատանիներն ու երիտասարդները միջոցառման ընթացքում աշխատելուց բացի, վերափոխվեցին հոգեպես՝ նորոգելով նաև իրենց հավատը: Իսկ նրանց հոգևոր դաստիարակության մասին նախապես հոգացել էին միջոցառման կազմակերպիչները, որոնց ջանքերով և վանքերում ու եկեղեցիներում գործող հոգևոր դասի ներկայացուցիչների օժանդակությամբ այդ օրերին կազմակերպվեցին կրոնական թեմաներով դասախոսություններ, խոսվեցին քարոզներ: Իսկ շարժման մասնակից երիտասարդները իրենց բաժանված գրականության, ինչպես նաև պատարագներին, ժամերգություններին, հոգեհանգստյան արարողություններին մասնակցելով, առավել մոտիկից ծանոթացան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդներին, ծեսերին, երաժշտությանը:

«Հավատք և ժառանգություն» շարժման մասնակիցները լինելով Հայաստանի բոլոր մարզերում, ականատես դառնալով այն խանդավառությանը, որը համակել էր շարժման մասնակից պատանիներին ու աղջիկներին, իրոք երջանիկ էին: Նրանց ցանած սերմերը պարարտ հողի մեջ էին, և իրենք հույս ունեին, որ, ինչպես աստվածաշնչյան առակում է ասվում, դրանք աճելով հարյուրապատիկ պտուղ կտան: Դրա վկայություններից մեկն էլ այն 11 պատանիների խնդրանք էր միջոցառման նախաձեռնողներին, որով կամենում էին մկրտվել Զվարթնոցի տաճարում, որտեղ դարեր շարունակ հոգևոր ոչ մի արարողություն չէր կատարվել: Համաձայն մատենագրական որոշ վկայությունների, 7-րդ դարում Ներսես Իշխանցի (Շինող) Կաթողիկոսը, կառուցելով տաճարը, այն Զվարթնոց կոչեց, «յանուն երկնաւոր Զուարթնոցն», և երազեց այն Աստծու տուն դարձնել նաև սերունդների համար, սակայն դարերի ընթացքում տաճարը, ավաղ, ավերվել էր, և անկատար էր մնացել Ներսես Իշխանցու երազը:

Այդ օրը, սակայն, տաճարի ավերումից շատ դարեր անց, այդ երազը ոգեկոչվեց կրկին: Սրբազան հայրը սիրով համաձայնեց Զվարթնոցում կատարել պատանիների մկրտությունը: Եվ ահա, մայիսի 2–ին, աշխատանք-

ների ավարտից հետո, բոլորը հավաքվեցին տաճարում: Սկսվեց մկրտության արարողությունը՝ նախագահությամբ Մեսրոպ արքեպս. Աշճյանի, մասնակցությամբ Զարեհ, Ներսեհ աբեղաների և Մկրտիչ քահանայի: Այդ օրը մկրտվածներն իրենց երկօրյա առաքելությունից հետո տուն վերադարձան Աստծուն որդեգրված:

Իսկ «Հավատք և ժառանգություն» շարժման կազմակերպիչները հավատում են, որ այդ պատանիները և նրանց հետ նաև շատերը կդառնան «պարարտ հողում ցանված սերմեր», որոնք անպայման ծլարձակելու են «հարյուրապատիկ պտուղ» տալու:

ՖԼՈՐԱ ԿԱԲԱՂՅԱՆ